

ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ

Ռուզաննա Յուրիի Դոխոյան

Արդի հայերենի ասացական բայերի
ինաստակառուցվածքային վերլուծություն

Ժ. 02. 01. «Հայոց լեզու» մասնագիտությամբ
բանասիրական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

Սեղմագիր

Երևան-2012

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանում:

Գիտական ղեկավար՝

բանասիրական գիտությունների
թեկնածու, պրոֆեսոր Ֆ. Յ. Խլղաթյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

բ.գ.դ., պրոֆեսոր Լ. Մ.

Խաչատրյան

բ.գ.թ., դոցենտ Լ. Գ. Թեյլան

Առաջատար կազմակերպություն՝

Պաշտպանությունը կայանալու է 2012թ. հունիսի 18-ին, ժամը 14⁰⁰-ին, ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում գործող ԲՈՅ-ի Լեզվաբանության 019 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0015, Երևան, Գր. Լուսավորչի 15:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2012թ. մայիսի 17-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝
բանասիրական գիտությունների
թեկնածու, դոցենտ՝

Ն. Սիմոնյան

Ատենախոսության ընդհանուր բնութագիրը

Թեմայի արդիականությունը: Հայ լեզվաբանության մեջ մինչ օրս **բայական բառապաշարի իմաստային դասակարգման համալիր վերլուծության** որևէ փորձ դեռևս չի կատարվել: Հետևաբար, ասացական բայերի բառաիմաստային խմբի ձևավորումը, իմաստային առանձնահատկությունների վերհանումն ու գործառությունը հնարավորություն կընձեռեն բայական բառապաշարը դասակարգելու ըստ որոշակի բառաիմաստային խմբերի՝ նպաստելով այդ ոլորտում գործող իմաստային խմբավորումների կանոնակարգմանն ու համակարգային փոխադարձ կապերի բացահայտմանը: Այսպիսով՝ թեմայի արդիականությունը պայմանավորված է բայական բառապաշարի իմաստաբանության համակարգային հետազոտության անհրաժեշտությամբ, թելադրված է արդի լեզվաբանության զարգացման հրամայականով:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Ճշգրտելով իմաստաբանության մեջ շրջանառվող որոշ տերմինների(թեմատիկ խումբ, բառաիմաստային խումբ, իմաստային դաշտ) իմաստն ու գործածությունը՝ արդի հայերենի ասացական բայերի իմաստային խմբավորումը դիտարկել ենք իբրև բառաիմաստային խումբ՝ կատարելով համակարգային վերլուծություն: Առաջադիր նպատակը իրագործելու համար փորձել ենք լուծել հետևյալ հիմնախնդիրները.

1. Ձևավորել ասացական բայերի **բառաիմաստային խումբը**՝ ճշգրտելով խմբի սահմանները:

2. Կատարել այդ բայերի իմաստակառուցվածքային վերլուծությունը՝ իմաստային դաշտերի սկզբունքով(միջուկային և եզրային իմակների ստորակարգության հաշվառմամբ):

3. Դասակարգել **բանավոր խոսքի ասացական** բայերը երկու սկզբունքով՝ **իմաստահարացուցային և շարակարգային**՝ տալով հարացույցների նկարագրությունը, շարադրելով շարակարգային առանձնահատկությունները:

4. Քննել ասացական բայերի **իմաստային առնչությունները** բառաիմաստային այլ խմբերի հետ:

5. Դիտարկել ասացական բայերը **խոսքային ակտերի** լուսի ներքո՝ կադապարելով համապատասխան **խոսքային իրադրություններ**:

6. Ներկայացնել ասացական բայերի կիրառությունը խոսքաստեղծման գործընթացում՝ ընդգծելով նրանց **գործաբանական**(պրագմատիկ) հայեցակերպը:

7. Նկարագրել ասացական բայերի **ոճական** հարուստ առանձնահատկությունները: **Չետագոտության գիտական նորույթը:** Ատենախոսության մեջ առաջին անգամ համալիր նկարագրությամբ տրվում է բայական բառապաշարում համակարգաձևավորիչ դեր կատարող **ասացական բայերի բառախմաստային խումբը** իր հարացուցային և շարակարգային կապերով և առանձնահատկություններով՝ խարսխված խոսքային գործունեության կոնկրետ գործառույթների վրա:

Չետագոտության փաստական նյութը: Աշխատանքը կատարելիս օգտվել ենք մի շարք բառարաններից¹՝ կազմելով արդի **հայերենի բուն կամ առաջնային, երկրորդային և փոխաբերական** ասացականների բառացանկերը համատարած ընտրամքի եղանակով: Աշխատանքում օգտագործել ենք նաև հարյուրավոր խոսքաշարային օրինակներ՝ ընտրողաբար քաղված գեղարվեստական գրականությունից:

Չետագոտության մեթոդական հիմքը: Ատենախոսությունը գրելիս առաջնորդվել ենք համալիր հետազոտության, համաժամանակյա նկարագրության, բաղադրիչային վերլուծության, աստիճանական նույնականացման, իմաստային հակադրության, բաշխումային, արտածման, մակածման մեթոդներով:

Չետագոտության տեսական և գործնական նշանակությունը: Չետագոտությունը կարող է նպաստել արդի հայերենի բայական բառապաշարի իմաստաբանության տեսության հետագա մշակմանը: Ասացական բայերի բառախմաստային խմբի օրինակով կարելի է կազմել նաև մյուս բառախմաստային խմբերը՝ հասնելով բայական բառապաշարի միկրոհամակարգի ձևավորմանը: Չետագոտության արդյունքները կարելի է օգտագործել բառարանագրության մեջ: Գործնականում այն կարելի է կիրառել մասնագիտական հատուկ դասընթացների, դասախոսությունների և գործնական պարապմունքների, հայերենի՝ որպես օտար լեզվի ուսուցման ժամանակ, ինչպես նաև մեթոդական ծրագրերում և ուսումնական ձեռնարկներում:

Ատենախոսության փորձարկումը: Աշխատանքի հիմնական դրույթները զեկուցումների ձևով ներկայացվել են հանրապետական գիտական նստաշրջաններում: Ատե-

¹ Է. Բ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Ե., 1976 և այլ օժանդակ բառարաններ:

նախոսությունը քննարկվել է Երևանի Վ. Բրյուսովի անվ. ԵՊԼՀ հայագիտության ամբիոնում և երաշխավորվել հրապարակային պաշտպանության:

Ատենախոսության կառուցվածքը: Բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, համառոտագրությունների և հապավումների, գիտական և գեղարվեստական գրականության ցանկերից և երկու հավելվածից: Առաջին հավելվածում ներկայացված են ասացական բայերի **հինգ ենթահարացույցների աղյուսակները**, երկրորդում՝ ասացականների **երեք դասերի բառացանկերը:**

Ատենախոսության բովանդակությունը

Ներածության մեջ ամփոփ կերպով ներկայացվում է բայական բառապաշարի իմաստաբանության ոլորտում գործածվող խմբավորումներին առնչվող խնդիրների ուսումնասիրության պատմությունը հայագիտության և ռուսագիտության մեջ: Հայագիտության մեջ մասամբ առանձնացվել է այդ խումբը և այդ մասին ակնարկվել է՝ շարահյուսական հարցերի արծարծման հետ կապված(մասնավորապես խնդրառության և ուրիշի ուղղակի խոսքի). ավելի շատ գործածվել է «**ասացական**» տերմինը: Ասացական բայերի իմաստային դասակարգման փորձեր կատարել են Ֆ. Խլղաթյանը, Ժ. Մանուկյանը: Ռուսագիտության մեջ թեև հարցը մանրագնին ուսումնասիրության է ենթարկվել և ենթարկվում է, սակայն տարանջատված չեն հարացուցային և շարակարգային սկզբունքները: Այնուհետև տրվում են այդ բայերի սահմանումը («**Ասացական են կոչվում այն բայերը, որոնք իրենց նշանակություններից որևէ մեկով մատնանշում են մտքի՝ բառայնորեն ձևավորված բանավոր(հնչողական) արտահայտման գործընթացը**»), այն տերմինների(իմույթ, իմակ, իմաստահավելիչ, բառաիմաստային տարբերակ, ներխոսքիմասային իմաստ) բացատրությունը, որոնց օգնությամբ կատարվում է վերոնշյալ բայերի իմաստակառուցվածքային վերլուծությունը՝ հիմնվելով հետևյալ **փաստարկների** վրա.

1. Ասացական բայերը հիմնականում **բազմիմաստ** են, և նրանց իմաստային ամփոփոխակում՝ իմույթում, պարունակվում են մեկից ավելի իմակներ, այսինքն՝ բառաիմաստային տարբերակներ. ներկայացրել ենք ասացական բոլոր բայերի իմաստային կառուցվածքը(տե՛ս Հավելված 2-ի **բուն կամ առաջնային ասացականների** ցանկը):

2. Բայի **իմաստային կառուցվածքում** տարբերակելով գլխիմաստը և նրան հարող հավելիմաստները՝ ձևավորել ենք **ասացական բայերի իմաստային հարացույցը**:

3. Ասացական բայերի **կապակցելիության փաստերի** ընդհանրացման հիման վրա կազմել ենք այդ բայերի ենթահարացույցների **շարակարգային կառուցատիպերը**, բացահայտել **արժուքային բնութագիրը** և նկարագրել հաղորդման տարբեր նպատակադրումներից բխող այլ առանձնահատկություններ:

I գլխում(«Ասացական բայերի իմաստային դասակարգումը») տրվում են արդի հայերենի բայական բառապաշարի իմաստային դասակարգման հիմնական չափանիշներն ու սկզբունքները: Հիմնականը **իմաստային չափանիշն** է, որով որոշվում է ասացական բայերի բառաիմաստային խմբի բառային կազմը բառարանային բացատրությունների հիման վրա, ապա շարահյուսական, ոճական չափանիշները: Վերոնշյալ բայերը դասակարգել ենք երկու սկզբունքով՝ **իմաստահարացուցային և շարակարգային: Իմաստահարացուցային դասակարգումը** կատարել ենք երկաստիճան համակարգով: **Առաջին աստիճանում** ասացական բառաիմաստային խումբը բաժանել ենք երեք դասի՝ **բուն կամ առաջնային, երկրորդային, փոխաբերական** ասացականների: **Բուն կամ առաջնային ասացականների դասին** ենք վերագրել այն բայերը, որոնք, որպես ասացական գործընթացի արտահայտություն, գրանցված են «Արդի հայերենի բացատրական բառարանում» իրենց առաջին երկու նշանակություններով(868): **Հարացուցային հարաբերությունները** բացահայտելու համար կատարել ենք «ասել» **միջուկային բայի** իմաստակառուցվածքային վերլուծությունը՝ վերջինիս օրինակով բացատրելով իմաստային հարացույցի ձևավորման առանձնահատկությունները: Դասակարգման երկրորդ աստիճանում **բուն կամ առաջնային ասացականները** խմբավորել ենք հետևյալ ենթահարացույցներում՝ **հաղորդման, հաղորդակցման, դատողական, դրոման և բնութագրական**, որոնք էլ իրենց հերթին, ըստ իմաստային տարբերացուցիչների կամ իմաստահավելիչների այս կամ այն կոնկրետացման, բաժանել ենք խմբերի, ենթախմբերի և շարքերի:

Հաղորդման ենթահարացույցի բոլոր բայերը միավորել ենք **սեռային** հետևյալ **նույնականացնող իմակով**². «Ինչ-որ մեկին ինչ-որ բան(օր.՝ միտք, տեղեկատվություն)

² Իմաստային պլանում բառային-կարգային իմակները ձևավորում են բառաիմաստային խմբեր, սեռային իմակները մեկ բառաիմաստային խմբի կազմում տարբերակում են ենթահարացույցներ, տեսակային իմակները՝ խմբեր, ենթախմբեր, շարքեր ևն:

հաղորդել խոսքի միջոցով»: Միջուկային բայերն են՝ **ասել, խոսել, հաղորդել**: **Հաղորդման ենթահարացույցը** բաժանել ենք երեք խմբի՝ **բուն հաղորդման, անվանման, ներգործման**: **Բուն հաղորդման խումբը** բաղկացած է չորս ենթախմբից: **I ենթախմբի** իմաստային բանաձևն է. «Ի՞նչ հաղորդել». ձևավորվում է **հաղորդման իմաստահավելիչով**(ավետել, խոստովանել): **II ենթախմբի** իմաստային բանաձևն է. «Որևէ բան հաղորդել կոնկրետ բովանդակությամբ». բաղկացած է երկու շարքից: **I շարքի** բայերը կոնկրետանում են **գվարճախոսության իմաստահավելիչով**(գվարճախոսել, կատակել), **II շարքի** բայերը՝ **բովանդակազուրկ խոսք հաղորդելու իմաստահավելիչով**(բարբաջել, դատարկախոսել): **III ենթախմբի** իմաստային բանաձևն է. «Ու՞մ, ինչի՞ մասին որևէ բան հաղորդել»՝ **հաղորդման վերաբերության իմաստահավելիչով**(զեկուցել, ծանուցել): **IV ենթախմբի** իմաստային բանաձևն է. «Հայտնել՝ հաղորդել խոսքով»՝ **հաղորդման միջոցի իմաստահավելիչով**(արտահայտել, օրհնել): **Անվանման խումբը** բաղկացած է երկու ենթախմբից: **Բուն անվանման ենթախմբի** իմաստային բանաձևն է. «Ինչ-որ մեկի կամ մի բանի անունը տալ, հաղորդել»՝ **անվանման իմաստահավելիչով**(անվանակոչել, կոչել): **Բնութագրական անվանման ենթախմբի** իմաստային բանաձևն է. «Ինչպե՞ս հաղորդել անձի կամ առարկայի անունը». բաղկացած է երկու շարքից: **I շարքի** բայերը կոնկրետանում են **վերանվանման իմաստահավելիչով**(մակակոչել, մականվանել), **II շարքի** բայերը՝ **տիտղոսավորման**(տիտղոսավորել, տիտղոսատրել): **Ներգործման խումբը** բաղկացած է երեք ենթախմբից: **I ենթախմբի** իմաստային բանաձևն է. «Որևէ բան հաղորդել՝ խոսակցի վրա ներգործելու նպատակով»՝ **հաղորդման նպատակի իմաստահավելիչով**: Այն ներկայանում է յոթ շարքով. **I շարքի** իմաստային բանաձևն է. «Որոշակի գիտելիքներ, հմտություններ, վարքուբարքի կանոններ հաղորդել՝ դաստիարակելու, կրթելու, սովորեցնելու նպատակով»(դաստիարակել, սովորեցնել), **II շարքի**՝ «Որևէ ուսմունք՝ գաղափարախոսություն, դավանանք պրոպագանդել՝ խոսակցին հետևորդ դարձնելու նպատակով»(գաղափարախոսել, քարոզել), **III շարքի**՝ «Սփոփանքի խոսքեր հաղորդել՝ մեկի վիշտը՝ անհանգստությունը խոսքով ցրելու՝ փարատելու նպատակով»(մխիթարել, ցավակցել), **IV շարքի**՝ «խոսակցի վրա ներգործել՝ հաղորդմամբ՝ որոշակի պայմաններով որոշակի տեղ գնալու նպատակով»(ժամադրել, հրավիրել), **V շարքի**՝ «Իբրև միջնորդ խոսել, խառնվել, միջամտել՝ որևէ գործ հաջողեցնելու նպատակով»(բարեխոսել, միջնորդել), **VI շարքի**՝ «Մի բան հաղորդել՝ խոսքը կտրելով՝ ընդհատել

լով, կողմնակի հավելում կատարել՝ խոսակցի վրա ներգործելու նպատակով»(ընդմիջարկել, ընդմիջել), **VII շարքի՝** «Արտահայտվել որևէ մեկի կամ որևէ բանի դեմ՝ նպատակ ունենալով հակադրվելու խոսողի կարծիքին»(բացասել, հակասել): **II ենթախմբի** իմաստային բանաձևն է. «Որևէ պատճառով կատարվածի մասին ինչ-որ բան հաղորդել՝ խոսակցի վրա ներգործելու, վերջինիս մոտ կարեկցանք, մխթաբուրություն առաջացնելու միտումով»՝ **հաղորդման պատճառի իմաստահավելիչով**. Երկայանում է երկու շարքով: **I շարքի** բայերը հաղորդումը կատարում են **ցածրաձայն** (հառաչել, հեծեծել), **II շարքի** բայերը՝ **բարձրաձայն**(կականել, կոծել): **III ենթախմբի** իմաստային բանաձևն է. «Դիտավորությամբ սուտ ասել՝ թյուրիմացությամ՝ մոլորության մեջ գցելու համար»՝ **միտումնավորության իմաստահավելիչով**(խաբել, հերյուրել):

Հաղորդակցման ենթահարացույցի մեջ մտնող բայերը միավորել ենք **սեռային** հետևյալ **նույնականացնող իմակով**. «Օգտվել բանավոր խոսքից և այն գործադրել ինչ-որ մեկի հետ մտքեր փոխանակելու նպատակով»: Միջուկային բայերն են՝ **հաղորդակցել, զրուցել, խոսել**: Ըստ իմաստային տարբերացուցիչների՝ հաղորդակցման ենթահարացույցը բաժանել ենք չորս խմբի: **I խումբը** բաղկացած է երկու ենթախմբից: **I՝ բուն հաղորդակցման ենթախմբի** իմաստային բանաձևն է. «Մեկի հետ զրուցել, խոսել մի բանի մասին՝ հաղորդակցվելու նպատակով»՝ **հաղորդակցման իմաստահավելիչով**(զրուցել, խորհրդակցել): **II՝ բնութագրական հաղորդակցման ենթախմբի** իմաստային բանաձևն է. «Ինչպե՞ս խոսել, զրուցել մեկի հետ հաղորդակցվելու նպատակով»՝ **հաղորդակցման բնութագրման իմաստահավելիչով**(գաղտնախոսել, ծածկախոսել): **II խմբի** իմաստային բանաձևն է. «Իրար հետ խոսել, կարծիքներ փոխանակել՝ որոշակի համաձայնության գալու համար»՝ **համաձայնության իմաստահավելիչով**(բանակցել, սակարկել): **III խմբի** իմաստային բանաձևն է. «Մեկի հետ տարածայնություններ ունենալ, վիճել՝ սեփական կարծիքը հաստատելու համար»՝ **վիճաբանության իմաստահավելիչով**(ընդդիմախոսել, հակաճառել): **IV՝ հարցուպատասխանական խումբը** բաղկացած է մեկ ենթախմբից և մեկ շարքից: **Հարցման ենթախմբի** իմաստային բանաձևն է. «Հարց ուղղել որևէ մեկին՝ պատասխան ստանալու ակնկալիքով»՝ **հարցման իմաստահավելիչով**(հարցակոծել, հարցաքննել): **Պատասխանի շարքի** իմաստային բանաձևն է. «Որևէ հարցի բավարարություն տալ պատասխանով»՝ **պատասխանի իմաստահավելիչով**(պատասխանել):

Դատողական ենթահարացույցի բայերը միավորել ենք **սեռային** հետևյալ **նույնականացնող իմակով**։ «Բանավոր խոսքի միջոցով բարձրաձայն արտահայտել ինչ-որ մտքեր, կարծիքներ, ենթադրություններ, դատողություններ ևն»։ Միջուկային բայերն են՝ **դատել, կշռադատել**։ Դատողական ենթահարացույցը բաժանել ենք վեց խմբի : I **խումբը** բաղկացած է երկու ենթախմբից և երկու շարքից: I՝ **բուն դատողական ենթախմբի** իմաստային բանաձևն է. «Դատողություններն արտահայտել բարձրաձայն»՝ **իմաստաբանության իմաստահավելիչով**(տեսաբանել, փիլիսոփայել): Այն ներկայացնում է երկու շարքով: I՝ **բնութագրական դատողական շարքի** իմաստային բանաձևն է. «Ինչպե՞ս արտահայտել դատողությունները»՝ **դատողության բնութագրման իմաստահավելիչով**(իմաստակել, տրամաբանել): II՝ **արտածման շարքի** իմաստային բանաձևն է. «Որո՞չ դատողություններից բխեցնել, մակաբերելով եզրակացնել որևէ բան»՝ **եզրակացության իմաստահավելիչով**(արտածել, եզրակացնել): II՝ **քննարկման ենթախմբի** իմաստային բանաձևն է. «Գիտականորեն ուսումնասիրել, հետազոտել որևէ երևույթ՝ բարձրաձայն արտահայտելով սեփական կարծիքը, երբեմն նաև քննարկելով»՝ **քննարկման իմաստահավելիչով**(դիտարկել, քննարկել): II՝ **սահմանման խումբը** բաղկացած է երկու ենթախմբից և երկու շարքից: **Բուն սահմանման ենթախմբի** իմաստային բանաձևն է. «Որևէ հասկացության էությունը բնորոշող սահմանում տալ»՝ **սահմանման կամ ձևակերպման իմաստահավելիչով**(ձևակերպել, սահմանել): Այն ներկայացնում է **բնութագրական սահմանման շարքով**, որի իմաստային բանաձևն է. «Ինչպե՞ս սահմանել»՝ **սահմանման բնութագրման իմաստահավելիչով** (կանխանշել, նախասահմանել): **Բնորոշման ենթախմբի** իմաստային բանաձևն է. «Որևէ բանի բնույթը՝ էությունը՝ էական առանձնահատկությունները որոշելով՝ բացահայտելով սահմանել, շարադրել»՝ **բնորոշման իմաստահավելիչով**(բնութագրել, շարադրել): Այն ներկայացնում է **մեկ շարքով**, որի իմաստային բանաձևն է. «Որևէ բան արժեքավորել, արժանիքին համապատասխան վերաբերվել, համարում ունենալ»՝ **զննահատման իմաստահավելիչով**(զննահատել, վերազննահատել): III՝ **մեկնաբանման խումբը** բաղկացած է երկու ենթախմբից և մեկ շարքից: **Բուն մեկնաբանման ենթախմբի** բայերի իմաստային բանաձևն է. «Որևէ բանի մասին տեղեկություններ՝ ծանոթություններ տալ՝ բացատրելու, պատճառաբանելու, պարզաբանելու ևն միջոցով»՝ **մեկնաբանման իմաստահավելիչով**(լուսաբանել, պատճառաբանել): Այն ներկայացնում է **մեկ շարքով**, որի իմաստային բանաձևն է. «Որևէ երևույթի իմաստ՝ նշանակու-

թյուն տալ, վերագրել, բնորոշելիս որևէ հատկանիշի կարևորությունն ընդգծել»՝ **իմաստավորման իմաստահավելիչով**(իմաստավորել, վերահիմաստավորել): **Ընթերցման ենթախմբի** իմաստային բանաձևն է. «Գրվածը կամ տպագրվածը ընկալել, գրած կամ տպագրած որևէ բան վերարտադրել բարձրաձայն կամ լուռ ընթերցել»՝ **ընթերցման իմաստահավելիչով**(դասախոսել, կարդալ): **IV՝ դասակարգման խումբը** բաղկացած է երկու ենթախմբից: **Բուն դասակարգման ենթախմբի** իմաստային բանաձևն է. «Որոշ տարբերակիչ հատկանիշների հիման վրա որևէ բան դասերի՝ կարգերի՝ խմբավորումների բաժանել՝ դասակարգել»՝ **դասակարգման իմաստահավելիչով**(դասդասել, դասել): **Թվարկման ենթախմբի** իմաստային բանաձևն է. «Մի առ մի թվել, որոշ հաջորդականությամբ հիշատակել, որևէ կարգի՝ շարքի մեջ դնել»՝ **թվարկման իմաստահավելիչով**(թվել, համրել): **V՝ փաստարկման խումբը** բաղկացած է երկու ենթախմբից և մեկ շարքից: **I՝ բուն փաստարկման ենթախմբի** իմաստային բանաձևն է. «Անհերքելի փաստերով՝ դատողություններով՝ տվյալներով հաստատել որևէ բանի ճշմարտությունը»՝ **ապացուցման իմաստահավելիչով**(ապացուցել, փաստարկել): **II՝ հավաստիացման ենթախմբի** իմաստային բանաձևն է. «Ապացույցներ՝ փաստարկներ բերել՝ ասածը հաստատելու համար»՝ **հավաստիացման և հիմնավորման իմաստահավելիչներով**(պնդել, վկայել): Այն ներկայանում է **մեկ շարքով**, որի իմաստային բանաձևն է. «Ապացույցներով, պատճառաբանություններով իր ասածի արդարացիությունը հաստատել»՝ **արդարացման իմաստահավելիչով**(արդարանալ, պատրվակաբանել): **VI՝ ենթադրության խմբի** իմաստային բանաձևն է. «Նախնական կամ ընդհանրապես որևէ դատողություն արտահայտել, որը, սակայն, ստուգման, ճշգրտման կարիք ունի»՝ **ենթադրման իմաստահավելիչով**(ենթադրել, կարծել, համարել):

Դրդման ենթահարացույցի բայերը միավորել ենք **սեռային հետևյալ նույնականացմող իմակով**. «Բանավոր խոսքի միջոցով որոշակի ներգործություն կատարել մարդու հոգեբանության, վարքի վրա՝ նրան դրդելով կատարելու որևէ արարք, գործողություն»: Միջուկային բայն **ասել**-ն է: **Դրդման ենթահարացույցը** բաժանել ենք **տասը խմբի**: **I խումբը** բաղկացած է հինգ ենթախմբից: **I՝ առաջարկության ենթախմբի** իմաստային բանաձևն է. «Որևէ հարց, խնդիր առաջադրել՝ հետագայում լուծելու նպատակով»՝ **առաջարկության իմաստահավելիչով**(առաջարկել, բարձրաձայնել): **II՝ հանձնարարման և պատվերի ենթախմբի** իմաստային բանաձևն է. «Մեկին որևէ

բան հանձնարարել, որևէ բան անելու պատվեր տալ»՝ **հանձնարարման, պատվերի իմաստահավելիչներով**(ավանդել, պատգամել): **III՝ հարկադրանքի ենթախմբի** իմաստային բանաձևն է. «Մեկի՝ մի բանի վրա որոշ պարտականություն դնել, մեկին հրամայել, կարգադրել՝ իր կամքը կատարելու պահանջով»՝ **հարկադրանքի, հրամանի իմաստահավելիչներով**(կարգադրել, հրամայել): **IV՝ թույլտվության ենթախմբի** իմաստային բանաձևն է. «Որևէ բան թույլ տալ»՝ **թույլտվության իմաստահավելիչով** (արտոնել, թույլատրել): **V՝ հրահանգի ենթախմբի** իմաստային բանաձևն է. «Հրահանգի՝ կարգադրության միջոցով ղեկավարել որևէ մեկի կամ որևէ խմբի գործողությունները»՝ **հրահանգի իմաստահավելիչով**(հրահանգավորել, հրահանգել): **II խումբը** բաղկացած է երկու ենթախմբից և մեկ շարքից: **I՝ խնդրանքի ենթախմբի** իմաստային բանաձևն է. «խնդրանքով որևէ մեկին դիմել մի բան անելու՝ ստանալու ևն համար»՝ **խնդրանքի իմաստահավելիչով**(աղերսել, հայցել): **II՝ դիմումի ենթախմբի** իմաստային բանաձևն է. «Որևէ խնդրանքով կամ հարցով մեկին դիմել»՝ **դիմումի իմաստահավելիչով**(աղոթել, դիմել): Այն ներկայանում է **մեկ շարքով**, որի իմաստային բանաձևն է. «Դիմել աղջկա ծնողներին՝ ամուսնանալու նպատակով»(խնամախոսել, հարսնախոսել): **III խումբը** բաղկացած է հինգ ենթախմբից և երեք շարքից: **I՝ խորհրդի ենթախմբի** իմաստային բանաձևն է. «Մեկին խրատական խորհուրդներ տալ»՝ **խրատի, խորհրդի իմաստահավելիչներով**(բարոյախոսել, խրատել): **II՝ հիշեցման ենթախմբի** իմաստային բանաձևն է. «Մեկին մի բան հիշեցնել, հուշել, թելադրել՝ դրդելով որոշակի գործողությունների»՝ **հիշեցման իմաստահավելիչով**(թելադրել, հուշել): Այն ներկայանում է **մեկ շարքով**, որի իմաստային բանաձևն է. «Մեկին՝ մի բան հիշել՝ հիշատակել՝ որևէ բան հաստատելու համար»՝ **հիշատակման իմաստահավելիչով** (հիշատակել, վկայակոչել): **III՝ զգուշացման ենթախմբի** իմաստային բանաձևն է. «Վտանգի՝ որևէ երևույթի վատ հետևանքի մասին հիշեցնել՝ իմաց տալ՝ տեղեկացնել, կարգի հրավիրել, որ զրուցակիցը չկատարի այնպիսի գործողություններ, որոնք կհանգեցնեն անհաջողությունների»՝ **զգուշացման իմաստահավելիչով** (զգուշացնել, նախազգուշացնել): Ըստ իմաստային տարբերացուցիչների՝ այս ենթախումբը բաժանվում է երկու շարքի: **I շարքի** իմաստային բանաձևն է. «Լինելիքը նախապես գիտենալ և ասել՝ զգուշացնելու նպատակով»՝ **զուշակության իմաստահավելիչով** (զուշակել, կանխատեսել): **II շարքի** իմաստային բանաձևն է. «Սպառնալիքով որևէ բանից զգուշացնել՝ նախազգուշացնել»՝ **սպառնալիքի իմաստահավելիչով**(հո-

խորտալ, սպառնալ): **IV՝ հորդորի ենթախմբի** իմաստային բանաձևն է. «Մեղմ ու համոզիչ խոսքերով մեկին համոզել՝ մի բան անելու, հոժարեցնել, տրամադրել մի բանի»՝ **հորդորի իմաստահավելիչով**(համոզել, վստահեցնել): **V՝ ներշնչման ենթախմբի** իմաստային բանաձևն է. «Որևէ մեկի կամ որևէ բանի մասին կանխակալ համոզմունք՝ կարծիք՝ պատկերացում ներշնչել, որոշակի տրամադրություն ստեղծել՝ դրդելով նրան որոշակի գործողությունների»՝ **ներշնչման իմաստահավելիչով**(կանխատրամադրել, ներշնչել): **IV խմբի** իմաստային բանաձևն է. «Որևէ բան խոստանալ, որևէ բան երդումով հաստատել»՝ **խոստման իմաստահավելիչով**(երդվել, խոստանալ): **V խումբը** բաղկացած է երկու ենթախմբից: **I՝ գովասանքի ենթախմբի** իմաստային բանաձևն է. «Հավանություն արտահայտել մեկի, մի բանի արժանիքների նկատմամբ»՝ **գովասանքի իմաստահավելիչով**(դրվատել, ներբողել): **II՝ խրախույսի ենթախմբի** իմաստային բանաձևն է. «Հավանությամբ՝ գովասանքով մեկին մղել մի բանի՝ նպաստելով դրա կատարմանը, քաջալերիչ խոսքերով ոգևորել՝ սիրտ տալ՝ սրտապնդել»՝ **խրախույսի իմաստահավելիչով**(խրախուսել, քաջալերել): **VI խումբը** բաղկացած է երկու ենթախմբից: **I՝ երգիծանքի ենթախմբի** իմաստային բանաձևն է. «Մեկի արարքները՝ պակասությունները երգիծանքի ենթարկել»՝ **երգիծանքի իմաստահավելիչով**(երգիծել, կատակերգել): **II՝ ծաղրանքի ենթախմբի** իմաստային բանաձևն է. «Մեկի արարքները՝ պակասությունները ծաղրանքով ներկայացնել, մեկին ծաղրի ենթարկել»՝ **ծաղրելու իմաստահավելիչով**(այպանել, հեզնել): **VII խումբը** բաղկացած է երկու ենթախմբից: **I՝ նախատինքի ենթախմբի** իմաստային բանաձևն է. «Հանդիմանել, մեկին կշտամբել որևէ բանի համար»՝ **նախատինքի իմաստահավելիչով**(կշտամբել, հանդիմանել): **II՝ դժգոհության ենթախմբի** իմաստային բանաձևն է. «Որևէ բանի վերաբերյալ դժգոհություն արտահայտել խոսքով»՝ **դժգոհության իմաստահավելիչով**(բողոքել, գանգատվել): **VIII խումբը** բաղկացած է երկու ենթախմբից: **I՝ մեղադրանքի ենթախմբի** իմաստային բանաձևն է. «Մեկին որևէ բանում մեղավոր ճանաչելով՝ դատական պատասխանատվության կանչել, մեղավոր համարելով դատապարտել ընդհանրապես»՝ **մեղադրանքի իմաստահավելիչով**(ամբաստանել, զրպարտել): **II՝ քննադատության ենթախմբի** իմաստային բանաձևն է. «Բացահայտել որևէ գործունեության՝ աշխատանքի ևն թերությունները՝ բացերը՝ դրանք վերացնելու՝ շտկելու համար»՝ **քննադատության իմաստահավելիչով**(բանադատել, քննադատել): **IX խումբը** բաղկացած է երկու ենթախմբից: **I՝ անարգանքի ենթախմբի**

իմաստային բանաձևն է. «Մեկի մասին վարկաբեկիչ սուտ լուրեր տարածել, վատ՝ չար, անպատիվ խոսքեր ասել, բացասական վերաբերմունք արտահայտել խոսակցի նկատմամբ՝ նրան վիրավորելու, հոգեկան տառապանք պատճառելու նկատառու-մով»՝ **անարգանքի իմաստահավելիչով**(անպատվել, չարախոսել): **II՝ խարդավանքի ենթախմբի** իմաստային բանաձևն է. «խաբեության դիմելով՝ որևէ իրավիճակ ոչ ճիշտ կերպով ներկայացնել»՝ **խարդավանքի իմաստահավելիչով**(կորզել, տարազե-կել): **X խումբը** բաղկացած է երկու ենթախմբից: **I՝ հաճոյախոսության ենթախմբի** ի-մաստային բանաձևն է. «Որևէ մեկին սիրաշահել խոսքով՝ հետագայում նրա սիրուն կամ վստահությանը արժանանալու հույսով»՝ **հաճոյախոսության իմաստահավելի-չով**(հաճոյախոսել, սիրաշահել): **II՝ շողոքորթության ենթախմբի** իմաստային բանա-ձևն է. «Շողոմ՝ կեղծ խոսքերով մեկին իր կողմը գրավել՝ ի նպաստ իրեն տրամադրե-լով»՝ **շողոքորթության իմաստահավելիչով**(կեղծախոսել, քծնել):

Բնութագրական ենթահարացույցի բայերը միավորել ենք **սեռային** հետևյալ **նույ-նականացնող իմակով**. «Անվանել խոսքի առարկան, բնութագրել խոսքի ինչպես ար-տաքին(ինչողական), այնպես էլ ներքին(բովանդակային) կողմերը՝ գնահատելով դրանք դրական կամ բացասական կերպով»: Միջուկային բայը **պատմել**-ն է: **Բնու-թագրական ենթահարացույցը** բաժանել ենք **վեց խմբի**: **I խումբը** բաղկացած է չորս ենթախմբից և երկու շարքից: **I՝ բնութագրական հաղորդման ենթախմբի** իմաստային բանաձևն է. «Ինչպե՞ս հաղորդել»՝ **խոսքի հրապարակային տարածման իմաստա-հավելիչով**(ազդարարել, հռչակել): **II ենթախմբի** իմաստային բանաձևն է. «Հաղոր-դել՝ ասել գեղեցիկ առոգանությամբ, շեշտադրությամբ»՝ **արտասանության իմաս-տահավելիչով**(ասմունքել, ուղերձել): **III ենթախմբի** իմաստային բանաձևն է. «Ինչ-պե՞ս խոսել, պատմել»՝ **պատմելու եղանակի իմաստահավելիչով**(թերասել, հան-կարծախոսել): **IV ենթախմբի** իմաստային բանաձևն է. «Հաղորդել երաժշտական ձայնով՝ երգել, և ի՞նչ երգել»՝ **երաժշտական ձայնով հաղորդելու իմաստահավելի-չով**(կրկներգել, սիրերգել): Այն ներկայանում է երկու շարքով: **I շարքի** իմաստային բանաձևն է. «Ինչպե՞ս երգել»՝ **երգելու ձևի իմաստահավելիչով**(հանգերգել, ողբեր-գել): **II շարքի** իմաստային բանաձևն է. «Որևէ բան հաղորդել մեկին երգի(զուգակց-ված եկեղ., գրական որոշ ժանրերի հետ) միջոցով»՝ **երգելու միջոցի իմաստահավե-լիչով**(եղերերգել, ցնծերգել): **II խումբը** բաղկացած է երկու ենթախմբից: **I ենթախմբի** իմաստային բանաձևն է. «Որևէ բան հաղորդել՝ ուշադրություն դարձնելով խոսքի գե-

ղագիտական կողմին»՝ **գեղեցկախոսության իմաստահավելիչով**(վայելչախոսել, քաղցրախոսել): **II ենթախմբի** իմաստային բանաձևն է. «ճարտար ու պերճ լեզվով որևէ բան հաղորդել»՝ **ճարտարախոսության իմաստահավելիչով**(ճարտասանել, պերճաբանել): **III խումբը** բաղկացած է երկու ենթախմբից: **I ենթախմբի** իմաստային բանաձևն է. «Որոշ հնչյուններ, չկարողանալով արտասանել, փոխել ուրիշ հնչյունների»՝ **խոսքի արատի իմաստահավելիչով**(թլվատել, կմկմալ): **II ենթախմբի** իմաստային բանաձևն է. «Որևէ բան հաղորդել անվարժ, թոթով լեզվով»՝ **թոթովախոսության իմաստահավելիչով**(գղզղալ, թոթովախոսել): **IV խումբը** բաղկացած է երեք ենթախմբից: **I ենթախմբի** իմաստային բանաձևն է. «Քարծր ծայնով որևէ բան հաղորդել»՝ **ծայնի բարձրության իմաստահավելիչով**(բղավել, գոռալ): **II ենթախմբի** իմաստային բանաձևն է. «Ցածր ծայնով որևէ բան հաղորդել»՝ **ծայնի ցածրության իմաստահավելիչով**(մրմնջալ, շշմջալ): **III ենթախմբի** իմաստային բանաձևն է. «Որևէ բան ասել, հաղորդել՝ տարատեսակ ծայներ արձակելով»՝ **ծայնի տարակերպ դրսևորման իմաստահավելիչով**(թավածայնել, կերկերախոսել): **V խումբը** բաղկացած է երեք ենթախմբից և երեք շարքից: **I ենթախմբի** իմաստային բանաձևն է. «Որևէ բանի մասին շատ խոսել»՝ **շատախոսության իմաստահավելիչով**(շաղակրատել, շատախոսել): Այն ներկայանում է երկու շարքով: **I շարքի** իմաստային բանաձևն է. «Խոսքը երկարացնել ավելորդ մանրամասնություններով»՝ **ճապաղ խոսքի իմաստահավելիչով**(երկարաբանել, ընդարձակաբանել): **II շարքի** իմաստային բանաձևն է. «Որևէ բան հաղորդել արագ և անհասկանալի կերպով»՝ **արագախոսության իմաստահավելիչով**(արագախոսել, բլբլալ): **II ենթախմբի** իմաստային բանաձևն է. «Որևէ բան հաղորդել հակիրճ կերպով»՝ **հակիրճախոսության իմաստահավելիչով**(հակիրճախոսել, սեղմաբանել): Այն ներկայանում է մեկ շարքով: **I շարքի** իմաստային բանաձևն է. «Որևէ բան հաղորդել սակավաթիվ բառերի օգնությամբ»՝ **քչախոսության իմաստահավելիչով**(սակավախոսել, քչախոսել): **III ենթախմբի** իմաստային բանաձևն է. «Որևէ բան հաղորդել կրկնելով»՝ **ասացական գործողության բազմակիության իմաստահավելիչով**(երկրորդել, կրկնել): **VI խմբի** իմաստային բանաձևն է. «Որևէ բան հաղորդել ոչ պատշաճ ձևով»՝ **հաղորդման բացասական բնութագրման իմաստահավելիչով**(գռեհկախոսել, հայիոյախոսել, պոռոտախոսել ևն):

Քուն կամ առաջնային ասացականների հաջորդում է երկրորդային և փոխաբերական ասացականների տարբերակումը. դրանք զուրկ են իմաստային հակադրություն-

նից, որովհետև միայն **խոսքային իրադրության** մեջ են ձեռք բերում ասացականության հատկանիշ, հետևաբար դուրս են մնում հարացուցային դասդասումից: **Երկրորդային ասացականների** դասին ենք վերագրել այն բայերը(186), որոնք, որպես ասացական գործընթացի արտահայտություն, ներկայացված են վերոնշյալ բառարանում երրորդական, չորրորդական կամ այլ նշանակություններով. նրանք իրենց բուն կամ առաջնային նշանակություններով պատկանում են բառախմաստային այլ խմբերի: **Երկրորդային ասացականների** մեջ կա ասացականության թաքնված ներունակ իմաստ, որն ի հայտ է գալիս որոշակի խոսքաշարում՝ կապված առաջնային իմաստի երկրորդային պլան մղվելու հետ: **Փոխաբերական ասացականների** դասին ենք վերագրել այն բայերը(295), որոնք վերոնշյալ բառարանում ունեն «փխբ.» նշումը: Փխբ. իմաստ ունեցող բայերը առանձնանում են բարդ իմաստաբանությամբ. բայի բովանդակության մեջ առարկայական-հասկացական նշանակություններից բացի առկա են նաև **հավելիմաստային բաղադրիչներ**, որոնցում արտացոլվում է մարդկանց հուզական, գնահատողական վերաբերմունքը այլևայլ երևույթների նկատմամբ: Բայի փխբ. գործածության ժամանակ նրա **իմաստային կառուցվածքում** տեղի է ունենում առանձնահատուկ վերակառուցում. որոշակի խոսքաշարում եզրային իմակները, խոսքային իրադրության որոշակի հանգամանքների շնորհիվ շեշտվելով և դառնալով առավել կարևոր, վերածվում են միջուկային կամ հիմնական իմակների: Իմաստային հատկանիշների այսպիսի տեղաշարժն էլ առաջացնում է **հավելիմաստ**: Փխբ. ասացականների դասը հիմնականում լրացնում են **բնածայնական, ֆիզիկական գործունեության, ֆիզիկական ազդեցության** և բառախմաստային այլ խմբերի բայեր, որոնք որոշակի խոսքային իրադրության մեջ փոխաբերացման, կապակցական օրինաչափությունների փոփոխության, արտալեզվական գործոնների ազդեցությամբ վերածվում են ասացականների՝ առաջացնելով, այսպես կոչված, **խոսքաշարային ասացականներ**:

Այնուհետև ներկայացրել ենք բայերի բազմիմաստության, տեքստում գործառվելիս նրանց՝ իմաստային շարժունակության հետևանքով առաջացող **հատումները մտածական և ասացական, բնածայնական և ասացական** բայերի միջև:

II գլխում(«Ասացական բայերի շարակարգային դասակարգումը») տրվում է տեսական համառոտ ակնարկ, ուր ներկայացվում է շարակարգի էությունը: Շարակարգայնության հիմնական սկզբունքը բառերի իմաստային համածայնությունն է՝ հիմ-

նված նրանց նշանակության մեջ ընդհանուր բաղադրիչների առկայության վրա, որոնք էլ նպաստում են նախադասության ձևավորմանը՝ ի հայտ բերելով **կապակցելիության նմանություններ**: Այդ փաստերն էլ վկայում են գործածված բայերի պատկանելությունը բառախմբաստային որևէ խմբի: Ասացական բայերի **շարակարգային կապերը** բացահայտել ենք՝ քննելով նրանց **արժուքայնությունը**, որը դրսևորվում է **ենթակառուցության, ստորոգառության, խնդրառության և պարագառության** միջոցով: Այնուհետև նկարագրել ենք «ասել» միջուկային բայի **իմաստաշարահյուսական առանձնահատկությունները**՝ ներկայացնելով դրանք **իմաստային կախվածության ծառի** տեսքով: Ապա խոսել ենք նրանց **շարակարգային դիրքերի** մասին. դրանք են՝ **ա)գործողի կամ սուբյեկտային, բ)խնդրային կամ օբյեկտային**: Վերջինս արտահայտվում է ինչպես բառով կամ բառակապակցությամբ, այնպես էլ երկրորդական նախադասությամբ և ուրիշի ուղղակի կամ անուղղակի խոսքի միջոցով:

Ասացական բայերի բառային նշանակություններում թաքնված է **գործողության ուղղվածությունը**, որը, կախված խոսողության նպատակադրումից, բաժանվում է իմաստային երեք տիպի՝ **խոսողության միագիծ ուղղվածության**(ասել, հաղորդել, ցավակցել ևն), **խոսողության փոխադարձ ուղղվածության**(բանակցել, զրուցել, խորհրդակցել) և **խոսողության չուղղորդված** գործողության(դիտարկել, կարդալ, տրամաբանել) բայերի(այն ասացականները, որոնք չեն պահանջում խոսքի հասցեատեր):

Վերլուծելով ասացականների խոսքաշարային շրջապատը և ընդհանրացնելով այն՝ բացահայտել ենք նրանց տիպային կապակցելիությունը, որում մարմնավորվում է նրանց **շարակարգային բնութագրի համալիրը**՝ արտացոլվելով **շարակարգային որոշակի կառուցատիպերում**:

Այնուհետև նկարագրել ենք ասացականների բոլոր ենթահարացույցների գործառությունը **ուրիշի ուղղակի և անուղղակի խոսքով կառույցներում**, որոնցում հեղինակային և ուղղակի խոսքերի իմաստային կապն ապահովում են ասացականները:

III գլխում(«Ասացական բայերի գործաբանական բնութագիրը») ներկայացրել ենք գործաբանության ուսումնասիրման ոլորտները, ապա շարադրել ասացական բայերի ենթահարացույցների կիրառության **գործաբանական հայեցակերպը**՝ ըստ խոսակցի վրա ունեցած ներգործության: Բացահայտել ենք ասացականների **կատարողական**(պերֆորմատիվ) գործառույթը, որը հավասարազոր է հաղորդած գործողության միանգամյա կատարմանը(**հռչակում են, երդվում են ևն**)՝ կաղապարելով

խոսքային հետևյալ իրադրությունները՝ **անվանումային, հաղորդումային, հաստատումային, երդումային, նախագգուշացումային, ծխակարգային, հարցումային** ևն: Ապա քննել ենք ասացականների բառային և խոսքաշարային ներակայումը: Լեզվական միավորը իմաստաբանորեն տարողունակ է և իր իմաստային կառուցվածքում ներառում է ոչ միայն **հիմնանշանակային**, այլև **խոսքաշարային**, ինչպես նաև **հավելիմաստային տարրեր**, և քանի որ այս բոլոր նշանակությունները չեն կարող միաժամանակ արտակա կերպով ի հայտ գալ, ներակայվում են: **Ներակայումը** դրսևորվում է և՛ բառային, և՛ խոսքաշարային մակարդակներում: Ներակայումը լեզվի **սեղմության, հակիրճության և տնտեսման** բնականոն պահանջների հետևանք է, հաղորդակցական կոնկրետ նպատակներ է իրականացնում և ունի ոչ միայն բառային և խոսքաշարային դրսևորում, այլև **ոճական** հարուստ արժեք: Այնուհետև շարադրել ենք ասացական բայերի կիրառությունը **գործառական և իրադրական բոլոր ոճերում**, ուսումնասիրել վերոնշյալ բայերի՝ խոսքաշարում ի հայտ բերած ոճական առանձնահատկությունները:

Եզրակացություններում ամփոփվել են ուսումնասիրության արդյունքները:

1. Լեզվաբանության արդի պահանջներից ելնելով՝ իմաստային հետազոտությունը կատարվել է **ասացական բայերի բառաիմաստային խմբի առանձնացման ու նկարագրման միջոցով**:
2. Արդի հայերենի բայական բառապաշարում համակարգաձևավորիչ դեր կատարող ասացական բայերի սահմանները որոշելիս և բառային կազմը ճշգրտելիս որպես հիմք է ընդունվել **իմաստային չափանիշը**՝ հենվելով այդ բայերի բառարանային բացատրությունների վրա:
3. Բայական բառապաշարի իմաստաբանությունն ուսումնասիրվել է **հարացուցային և շարակարգային սկզբունքների** հիման վրա: **Առաջին աստիճանում** ասացական բառաիմաստային խումբը բաժանել ենք երեք դասի՝ **բուն կամ առաջնային, երկրորդային, փոխաբերական** ասացականների: Դասակարգման **երկրորդ աստիճանում բուն կամ առաջնային ասացականները** խմբավորել ենք ենթահարացույցներում: Ենթահարացույցների բայերը միավորվում են **սեռային նույնականացնող իմակների** միջոցով. դրանք **միջուկային բայերն** են, որոնց առանձնահատկություննե-

րի բացահայտումը հնարավորություն է տալիս ճանաչելու նաև տվյալ ենթահարացույցի բայերի հատկանիշների ուրվագծերը ամբողջության մեջ: Ենթահարացույցները խմբերի ենք բաժանել **տեսակային տարբերակիչ իմակների** հիման վրա. դրանք **իմաստահավելիչներն** են, ըստ որոնց էլ ենթահարացույցները բաժանվում են խմբերի, ենթախմբերի և շարքերի: Դասակարգելիս տարբերակման իմաստային չափանիշը(որոշակի բացառություններով հանդերձ) համարվել է **տեսակային իմակի առաջնայնությունը**:

4. Արդի հայերենի ասացական բայերի` **իբրև հարացույց ներկայացվող բառաիմաստային խումբը**, ըստ հարացուցային սկզբունքի, բաժանել ենք հետևյալ ենթահարացույցների` **հաղորդման, հաղորդակցման, դատողական, դրդման, բնութագրական**:

5. **Երկրորդային և փոխաբերական** ասացականները զուրկ են իմաստային հակադրությունից. նրանք միայն խոսքային իրադրության մեջ են ձեռք բերում ասացականության հատկանիշ` ձևավորելով **խոսքաշարային ասացականների** տեսակը և կապ ունեն խոսքային տարբերակայնության հետ, հետևաբար դուրս են մնում հարացուցային դասդասումից:

6. Ասացական բայերը **բազմիմաստ** են, և այդ հատկանիշը հատկապես ի հայտ է գալիս տեքստում գործածվելիս: Այդ իսկ պատճառով նրանց իմաստային շարժունակությունը բազմապատկվում է զուգորդման որոշակի առանձնահատկություններով` բարենպաստ պայմաններ ստեղծելով բայերի անցման համար մի դաշտից կամ մի բառաիմաստային խմբից մյուսը: **Անցման** այդպիսի օրինակներ են դրսևորում **մտածական և ասացական, բնածայնական և ասացական բայերը**:

7. Բառերի **իմաստային համաձայնությունը**, հիմնված նրանց նշանակության մեջ ընդհանուր բաղադրիչների առկայության վրա, նպաստում է նախադասության ձևավորմանը` ի հայտ բերելով կապակցելիության նմանություններ, և նմանության փաստերն էլ վկայում են գործածված բայերի պատկանելությունը ասացականների բառաիմաստային խմբին: **Շարակարգային դասակարգումը** կատարվել է բայերի կապակցելիության հիման վրա` պայմանավորված **արժույթի քանակով**: Ըստ այդմ էլ բացահայտվել է նրանց **արժույթայնությունը**, որը դրսևորվում է **ենթակառուցության, ստորոգառության, խնդրառության և պարագառության միջոցով**: Ասացականների բառաիմաստային խմբի բոլոր ենթահարացույցներն ունեն **Գող^{ենթ} + ԱԲ^{ստ}, Գող^{ենթ} + ԱԲ^{ստ} + Գրդ^{ուղիս}, Գող^{ենթ} + ԱԲ^{ստ} + Գրդ^{անուղիս}, Գող^{ենթ} + ԱԲ^{ստ} + Գրդ^{ուղիս} + Գրդ^{անուղիս}** կա-

ռուցատիպերը՝ կիրառության տարբեր ծավալներով՝ պայմանավորված խոսքաշարուն հաղորդման կոնկրետ նպատակադրման առաջնայնությանը(նայած թե որ արժույթն է պարտադիր հաղորդումն իրականացնելու համար):

8. ԱԲ-երը հատկանշվում են **ուրիշի ուղղակի և անուղղակի խոսք ներմուծելու կարողությամբ**՝ այդ կառույցներում արտակա կերպով բացահայտելով իրենց մեջ պարունակվող տեղեկատվության բովանդակությունը:

9. **ԱԲ-երի իմաստակառուցվածքային վերլուծությունը** ի հայտ է բերում **շարակարգային հետևյալ առանձնահատկությունները**՝ ա)ԱԲ-երը, կապակցվելով **անձ**(փոխաբերացման դեպքում նաև ոչ անձ) **ցույց տվող գոյականներին**, ներունակորեն ցուցում են արտահայտում դեպի **գործող անձը**, բ)կապակցվելով **ուղիղ խնդրին**՝ ցուցում են արտահայտում դեպի **գործողության առարկան**, գ)կապակցվելով **անուղղակի խնդիրներին**՝ ցուցում են արտահայտում դեպի **խոսքի հասցեատերը, խոսքի թեման**, դ)կապակցվելով **որևէ շարահյուսական կառույցի**(մասնավորապես՝ երկրորդական նախադասության, ուրիշի ուղղակի կամ անուղղակի խոսքի)՝ մասամբ կամ ամբողջապես բացահայտում են **խոսքի բովանդակությունը**:

10. Գործառական իմաստով բառը իր կիրառությունը գտնում է նախադասության մեջ, և գործառույթները, որոնք նախադասության մեջ տիպական են բառի համար, օրգանապես կապված են իրար հետ և ձևավորում են վերջինիս **իմաստաբանությունը**: Հենց այդ կապի մեջ էլ դրսևորվում է հարացույցի և շարակարգի միասնությունն ու փոխպայմանավորվածությունը, բառերի խոսքային իրացումներն ու լեզվի **համակարգայնությունը**:

11. Ըստ գործաբանական հայեցակերպի՝ ասացական բայերը գործածվում են խոսողի վրա որոշակի ներգործություն կատարելու նպատակով. **հաղորդման ենթահարացույցի** ասացականներն այդ ներգործությունը կատարում են խոսակցին որոշակի տեղեկատվություն հաղորդելու՝ իրազեկելու, **հաղորդակցման ենթահարացույցի** բայերը՝ խոսակցի հետ հաղորդակցվելու, միմյանց հետ մտքեր փոխանակելու, դիմացինի կարծիքն իմանալու՝ հետազայում նրա վրա այս կամ այն կերպ ազդելու կամ ներգործելու միջոցով, **դատողական ենթահարացույցի** բայերը՝ դատողություններ, կարծիքներ, ենթադրություններ հաղորդելու, **բնութագրական ենթահարացույցի** բայերը ևս տեղեկատվություն հաղորդելու՝ շեշտը դնելով, սակայն, հաղորդման բնութագրական կողմի վրա: Առաջին չորս ենթահարացույցներում խոսքային ներ-

գործությունը համեմատաբար թույլ է և կարող է փոխել կամ չփոխել խոսակցի վարքը, մինչդեռ այլ է պատկերը **դրոման ենթահարացույցի** բայերի համար: Այս ենթահարացույցի բայերը գործածվում են հատկապես խոսակցի վրա ներգործություն կամ դրդուն կատարելու համար՝ նրա վարքը փոխելու նպատակով:

12. Ասացականների մեծ մասն ունի **կատարողական**(պերֆորմատիվ) գործառույթ:

13. Ասացականներին հատուկ է **բառային** և **խոսքաշարային ներակայումը**, որը մեծ չափերի է հասնում՝ ընդգծելով վերջիններիս կարևորությունը, գորացնելով նրանց հաղորդակցական արժեքը և ոճավորելով խոսքը:

14. Ասացական բայերը դրսևորում են նաև **ոճական** հարուստ առանձնահատկություններ՝ կիրառվելով **գործառական, իրադրական** ոճերում, այդ պատճառով էլ նրանց ոճական առանձնահատկությունների վերհանումը նպաստում է **գործառական, իրադրական** և **անհատական ոճերի** այլևայլ հատկությունների բացահայտմանը:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում.

1. **Բնածայնական բայերի ասացական արժեքը**, Հայագիտություն և զուգադրական լեզվաբանություն: Գիտական աշխատություններ, Ձ պրակ(նվ. է պրոֆ. Յ. Խլղաթյանի ծննդյան 70-ամյակին): Եր.: Լինգվա, 2008թ., էջ 94-101:
2. **Ասացական և մտածական բայերի իմաստային առնչությունները**, Ջահուկյանական ընթերցումներ 2009, Հանրապետական գիտական նստաշրջանի զեկուցումներ(Երևան, ապրիլի 28-29, 2009թ.), Ե., «Նաիրի» 2009, էջ 57-62 :
3. **«Ասել» բայի բառահիմաստային տարբերակները արդի հայերենում**, Կանթեղ 1: Գիտական հոդվածների ժողովածու. Գիրք 4(41). Եր.: Ասողիկ, 2009, էջ 62-69 :
4. **Ասացական բայերի իմաստային դասակարգումը արդի հայերենում**, Ջահուկյանական ընթերցումներ, Ակադեմիկոս Գևորգ Ջահուկյանի 90-ամյակին նվիրված հանրապետական գիտական նստաշրջանի զեկուցումներ(Երևան, 2010թ., մայիսի 6-7). Եր.: Էդիթ Պրինտ, 2010թ., էջ 103-114:
5. **Ասացական բայերը Հովհ. Թումանյանի ստեղծագործություններում**, Բանբեր Երևանի Վ. Բրյուսովի անվան պետ. լեզվբ. համալսարանի N 2: Գիտական աշխատություններ: Հայագիտություն և զուգադրական լեզվաբանություն: Պրակ է (նվ. է Հ. Թ.-ի ծննդյան 140- ամյակին): Եր.: Լինգվա, 2010թ., էջ 85-93 :
6. **Արդի հայերենի ասացական բայերի կատարողական(պերֆորմատիվ) գործառությունը**, Ջահուկյանական ընթերցումներ, Հ. Աճառյանի ծննդյան 135-ամյակին նվիրված հանրապետական գիտական նստաշրջանի զեկուցումներ(Երևան, 2011թ., ապրիլի 27-29). Ե.: Էդիթ Պրինտ, 2011. -304 էջ, էջ 102-113:

Дохоян Рузанна Юрьевна

**Структурно-семантический анализ глаголов говорения
современного армянского языка**

**диссертация на соискание ученой степени кандидата филологических
наук по специальности 10. 02. 01. «Армянский язык»**

Защита состоится 18-ого июня 2012г. в 14:00 часов на заседании Специализированного совета 019 Института языка им. Р. Ачаряна НАН РА.
Адрес: Ереван, улица Гр. Лусаворича 15.

Резюме

В армянском языкознании до сих пор не намечалось ни одного комплексного исследования семантической классификации глагольной лексики. Следовательно, тема очень актуальна, обусловлена необходимостью комплексного изучения семантики глагольной лексики.

Целью нашего исследования является тщательное изучение и анализ лексико-семантической группы глаголов говорения современного армянского языка. Вышеупомянутые глаголы благодаря своим парадигматическим и синтагматическим связям, синтаксическим и стилистическим особенностям играют системообразующую роль в глагольной лексике, базируясь на конкретных речевых процессах.

Диссертация состоит из введения, трех глав, заключения, списка сокращений и аббревиатур, библиографии, двух приложений: 1. пяти таблиц подпарадигм глаголов говорения; 2. трех словариков трех классов глаголов говорения.

Во введении обосновывается актуальность темы, излагается история изучения группировок в области семантики глагольной лексики в арменоведении и в русистике. Выдвигаются цель и задачи исследования.

В первой главе («Семантическая классификация глаголов говорения») описывается семантико-парадигматическая классификация глаголов говорения через двухступенчатую систему. **На первой ступени** они подразделяются на три класса: 1) **подлинные, или первичные глаголы говорения (868)**, 2) **вторичные (186)** и 3) **переносные (295)**. **На второй ступени первичные глаголы** подразделяются на следующие подпарадигмы: 1) **глаголы сообщения**, 2) **глаголы общения**, 3) **глаголы рассуждения**, 4) **глаголы побуждения**, 5) **глаголы описания**.

Затем дифференцируются **вторичные и переносные глаголы**, которые лишены семантических противопоставлений и только в контексте приобре-

тают признак говорения. Описываются пересечения лексико-семантических групп глаголов мышления и звучания с группой глаголов говорения, в результате чего последняя пополняется и образуются **контекстные глаголы говорения**.

Во второй главе («Синтагматическая классификация глаголов говорения») излагается краткий теоретический очерк, где представляется сущность синтагмы. Главный синтагматический принцип-семантическое согласование слов, основанное на всеобщих элементах, которые имеются в их значении и способствуют образованию предложения, выявляя сходства сочетаемости. И сходства сочетаемости свидетельствуют о принадлежности используемых глаголов какой-либо лексико-семантической группе. Затем исследуются семантико-синтагматические особенности ядерного глагола **«сказать»**, представленного в виде дерева семантических зависимостей. Далее описываются синтагматические позиции глаголов говорения: 1. объектная позиция; 2. субъектная позиция. После чего излагаются синтагматические связи глаголов говорения, их валентность, то есть сочетаемость этих глаголов с субъектом (подлежащее), предикатом, объектами (дополнения), сирконстантами. Представляется направленность, которая скрывается в значениях этих глаголов, исходя из целенаправленности речевой деятельности. Анализируется контекстное окружение, даются синтагматические структурные типы всех подпарадигм, описывается функционирование всех подпарадигм глаголов говорения **в прямой и косвенной речи**.

В третьей главе («Прагматическая характеристика глаголов говорения») представлено исследование прагматических областей, функционирование глаголов говорения в прагматическом аспекте. И с позиции этого аспекта излагается **перформативная функция**, которая равнозначна одновременному исполнению передаваемого процесса (например, провозглашаю, клянусь и т. п.), моделируя разные речевые ситуации (например, ситуации общения, осуждения, признания, сообщения, утверждения и т. п.). Затем мы исследовали словесную и контекстную имплицитность глаголов говорения. Языковая единица семантически очень емкая и в своей семантической структуре содержит не только денотативные, но и контекстные, а также коннотативные элементы. И поскольку все эти значения не могут одновременно эксплицитно выявляться, они имплицитуются. Имплицитность проявляется и на словесном и на контекстном уровнях. Это естественное следствие потребности сжатости, лаконичности и экономности языка. Имплицитность реализует конкретные коммуникативные цели и имеет не только словесную и контекстную, но и стилистическую ценность. Затем изучаются стилистические особенности глаголов говорения, а также их употребление **в функциональных и ситуативных стилях**.

В заключении обобщаются результаты исследования.

Dokhoyan Ruzanna Yuri

"The semantic-structural analysis of the verbs of the group "say"

The thesis claiming for the degree of candidate of philological sciences in the specialization 10. 02. 01. "The Armenian language"

The defense will be held on June 18, 2012, at 14:00 in the session of specialized council 019 at the Institute of Languages of NAN RA after N. Acharyan. Address: 15 Gr. Lusavorich, Yerevan, Armenia.

Summary

In the Armenian Linguistics no attempt has been done in the complex analysis of the semantic classification of the verbal vocabulary by now, therefore the theme is modern conditioned by the necessity of the semantic system research of that vocabulary.

The aim of the thesis is the detailed research and analysis of the semantic group of the verbs of the group "say" of modern Armenian as those verbs play a system-forming part in the verbal vocabulary with their paradigmatic and syntagmatic links, with their rich syntactical and stylistic particularities based on the concrete speech functions. The thesis consists of the introduction, three chapters, conclusions, the lists of abridgments, abbreviations, fiction and scientific literature and two appendices, where you can find five tables of sub-paradigms of the verbs of the group "say" of Armenian, glossaries of three classes of the verbs of the group "say". In the introduction the history of examination of the problems of groupings used in the semantic sphere of verbal vocabulary is stated briefly in Armenology and Russianology.

In the first chapter(**The Semantic classification of the verbs of the group "say"**) the semantic-paradigmatic classification of the verbs of the group "say" of modern Armenian is described by two-degree system. In the first degree they are divided into three classes: essential or primary(868), secondary (186), figurative(295). In the second degree of classification the essential or primary verbs of group "say" are divided into the following sub-paradigms: reportive, communicative, reflective, instigative, descriptive. Then the secondary and figurative verbs of the group "say" are differentiated, which are deprived of semantic contrasts and they acquire a property of "say" only in the context. The crossing of the word semantic groups of "say" and "think", "say"

and "onomatopoeic" are described, in the result of which the word-semantic group of the verbs of the group "say" is completed as well as those of the context are created.

In the second chapter(**The syntagmatic classification of the verbs "say"**) a short theoretical review is given, where the main point of the syntagmatics is presented. The main principle of the syntagmatic order is the semantic accordance of the verbs, based on the presence of the general components in their meanings, which contribute to the formation of the sentence, revealing resemblances of the combination. And the facts of the resemblance of the combination give evidence against the word-semantic group the verbs belong to. Then we have described the semantic-syntagmatic particularities of the nuclear verb "say" presenting them by the appearance of the tree with semantic dependence. We have presented the syntagmatic positions of the verbs of the group "say", they are: objective positions, subjective positions. The links of context of these verbs are studied, their valency is examined, the linking of those verbs to the subject, predicate, objects and adverbial modifiers. The direction of the action hidden in the word meanings is presented depending on the speech single-mindedness. The context surroundings of the above mentioned verbs is analysed, all the context structures of sub-paradigms are given, the function of the verbs of the group "say" is stated in the direct and indirect speech.

In the third chapter(**The pragmatic character reference of the verbs of the group "say"**) the spheres of the study of pragmatism and the pragmatic aspect of the use of the verbs of the group "say" are presented. From that point of view the performative using of the verbs of the group "say" is stated, which is equal to the single fulfilment of the reported action (for example, I proclaim, I swear etc), modelling numerous speech situations (for example, report, promise, confession, affirmation, charge etc). Then we have examined word and syntagmatic implication. The language unit is semantically spacious and in its semantic structure it includes not only genotative but also contextive, as well as connotative elements, and since all these meanings can't appear simultaneously in explicit way are implicated. The implication is manifested both in word and in contextive levels. The implication is the result of normal requirements of the language brevity, conciseness and economy, it carries out concrete goals of communication and it has not only word and syntagmatic manifestation but also a rich stylistic value. Then the stylistic particularities of the verbs of the group "say" have been examined as well as the active use of the mentioned verbs in the functional and situative styles are presented.

The results of the study are summarized in the conclusions.